



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ПЕДАГОГИКА И СОЦИАЛЬНЫЕ НАУКИ**

**PEDAGOGY AND SOCIAL SCIENCES**

**2 (57)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ  
(ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ)**

**ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ հանրակրթության պետական չափորոշիչ, առանցքային կարողունակություններ, վերջնարդյունքներ, հենքային ուսումնական պլան, գնահատման համակարգ*

Հոդվածի նպատակն է վերլուծել հանրակրթության պետական նոր չափորոշիչի ձևավորման հիմքում ընկած առանցքային գաղափարները, սկզբունքներն ու հիմնարար մոտեցումները, ինչպես նաև մինչ չափորոշիչ ամբողջական ներդրումը մանկավարժական հանրության շրջանում խթանել կառուցողական քննարկումներ:

Հոդվածում դիտարկվում են կարողունակությունների և դրանց ձևավորմանն ուղղված վերջնարդյունքների հիման վրա կառուցված կրթության բովանդակության առանձնահատկությունները, առաջարկվող նոր ուսումնական պլանի և գնահատման համակարգի նորությունները: Համեմատական վերլուծության արդյունքում ներկայացվում են նոր չափորոշիչի առավելությունները, ինչպես նաև նրանում արժարժված հիմնարար գաղափարների համընդհանուր ընկալման և ներդրման հետ կապված մտահոգությունները:

**Համառոտ պատմությունը:**

Հանրակրթության պետական չափորոշիչը Հանրակրթության մասին ՀՀ օրենքից հետո այն հիմնարար փաստաթուղթն է, որով կանոնակարգվում է մեր երկրի կրթական համակարգի բովանդակային դաշտը: Կրթական չափորոշիչ հասկացությունը մեր կրթական համակարգ է ներմուծվել վերջին 20 տարում: 2004 թվականին, երբ անցում կատարվեց 12-ամյա միջնակարգ կրթության համակարգին, մշակվեց Հանրակրթության պետական կրթակարգը (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829>): Դրա հիման վրա նույն թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց նաև Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195>), որը, չնչին փոփոխություններով, գործում էր մինչ վերջերս:

Իսկ ինչո՞ւ այդքան երկար ժամանակ ըստ էության չի փոխվել հանրակրթության պետական չափորոշիչը: Բացատրություններից մեկն այն է, որ դրա անհրաժեշտությունը կրթական համակարգում չի զգացվել, քանի որ լուրջ հետազոտություններ չեն իրականացվել՝ պարզելու, թե ինչպես է գործնականում աշխատում չափորոշիչի այս կամ այն նորմը, ինչպիսի ազդեցություն է այն ունեցել կրթության որակի բարելավման վրա, ինչ փոփոխությունների կարիք կա: Առաջացած խնդիրներին պարզապես տրվել են իրավիճակային, մակերեսային լուծումներ:

Նման մոտեցման դեպքում մեր կրթական համակարգը դատապարտված է միշտ լինել հետևից վազողի դերում. մինչ նա կհասցնի արձագանքել աշխարհում ընթացող փոփոխություններին, իրականությունը մեզանից շատ հեռու կլինի, և մենք նորից կհայտնվենք հետապնդողի դերում:

### **Ե՞րբ է փոխվում և ի՞նչն է ստիպում փոխել կրթական չափորոշիչը:**

Գործարկվում է կրթական չափորոշիչների փոփոխության երկու սցենար: Առաջին դեպքում չի վերանայվում կրթության հարացույցը, չեն փոխվում կրթության բովանդակության կառուցման հիմքում ընկած հիմնարար սկզբունքները: Այս դեպքում կատարված փոփոխությունների նպատակը պարզապես համակարգի գործունեության արդյունավետության բարելավումն է: Վերջին 15 տարում կատարված փոփոխությունները ենթարկվել են այս տրամաբանությանը:

Առավել հիմնարար են այն փոփոխությունները, որոնց հիմքում ընկած են կրթության տեսլականի վերաիմաստավորումը, կրթական այնպիսի մոդելի կառուցումը, որն ուղղված է ապագային և հաշվի է առնում այն բազմաբովանդակ գործոնները, որոնք էական ազդեցություն ունեն և ունենալու են կրթության բովանդակության ձևավորման վրա: Այդպիսիք են աշխարհաքաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական, ազգային, մշակութային գործոնները: Հենց այսպիսի փոփոխությունների է հավակնում նոր մշակված և 2021 թ. փետրվար ամսին ՀՀ կառավարության կողմից հաստատված հանրակրթության պետական նոր չափորոշիչը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>):

### **Ի՞նչ էր անհրաժեշտ իրականացնել մինչ նոր չափորոշիչի մշակումը:**

Նոր մշակվող չափորոշիչի հաջողությունը մեծ չափով պայմանավորված է մի շարք գործողություններով, որոնք անհրաժեշտ էին իրականացնել մինչ գործող չափորոշիչի փոփոխությունը: Այդպիսիք են՝

- կրթության որակի ապահովման, համապատասխան բովանդակության ձևավորման բնագավառներում առկա հիմնախնդիրների համակողմանի հետազոտությունը,
- գործող չափորոշի արդյունավետության գնահատումը, թերությունների բացահայտումը,
- առաջիկա տարիների կրթության զարգացման թիրախների, գերակայությունների հստակեցումը,
- կրթական առանձին բնագավառների հայեցակարգերի վերանայումը:

Նոր չափորոշիչների ձևավորման համար որպես ուղենիշ պետք է հանդիսանար կրթության զարգացման պետական ծրագիրը: Սա այն փաստաթուղթն է, որտեղ ամրագրվում են կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, ներկա իրողություններով և մարտահրավերներով պայմանավորված գերակայությունները, զարգացման ռազմավարական ուղղությունները, բարեփոխումների հիմնարար գաղափարները: Վերջինս տեսական և մեթոդոլոգիական հիմք պետք է հանդիսանար նոր մշակվող հանրակրթության պետական չափորոշի համար: Մինչդեռ «Կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այս փաստաթուղթը մենք չունենք սկսած 2015 թվականից, իսկ շատ ուշացած, դեռևս նախագծի կարգավիճակ ունեցող «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» (<https://www.e-draft.am/projects/528/about>) չի պարունակում դրա համար անհրաժեշտ բավարար նյութ:

Նոր չափորոշիչը էապես կշահեր, եթե մինչ դրա մշակումն իրականացվեին հանրակրթության բովանդակային դաշտում առկա խնդիրների հիմնարար ուսումնասիրություններ: Ինչ չափով աշխատեցին գործող հանրակրթության պետական չափորոշում ամրագրված դրույթները, ինչո՞ւ առարկայական չափորոշիչները չդարձան ուսուցչի աշխատանքը կարգավորող արդյունավետ գործիք: Մանկավարժական հանրության մեջ շրջանառվող այն պնդումները, թե գործող ծրագրերը ծանրաբեռնված են, որ դասագրքերը վատն են, որ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները արդյունավետ չեն, այդպես էլ չհիմնավորվեցին հիմնարար հետազոտություններով: Մինչդեռ մեր կրթական համակարգին խիստ անհրաժեշտ հենց այդպիսի հետազոտությունները կարող են ճիշտ ուղղորդել համակարգի առաջընթացը:

Ասվածը հիմնավորենք օտար լեզուների ուսուցման օրինակով: Ինչո՞ւ հանրակրթական դպրոցում, 10-11 տարի ուսումնասիրելով որևէ օտար լեզու, սովորողների գերակշռող մասը ձեռք չի բերում այդ լեզվով

հաղորդակցվելու պարզագույն կարողություններ, մինչդեռ դա հնարավոր է դառնում մի քանի ամսվա արագացված դասընթացների միջոցով: Ո՞րն է օտար լեզուների ուսուցման նպատակը դպրոցի տարբեր աստիճաններում, ինչպիսի՞ն պետք է լինի քերականական գիտելիքների ծավալի և բանավոր հաղորդակցման կարողությունների օպտիմալ հարաբերակցությունը, ի՞նչ սկզբունքային փոփոխություններ պետք է կատարվեն օտար լեզուների դասավանդման հայեցակարգում. սրանք հարցեր են, որոնք պետք է ուսումնասիրվեին և իրենց պատասխանները ստանային մինչ նոր չափորոշիչների ստեղծմանը ձեռնամուխ լինելը:

Հանրակրթության նոր չափորոշիչի հանրային քննարկումների ժամանակ հայոց պատմության և գրականության շուրջ ծավալված բանավեճը ավելորդ անգամ հաստատեց այն փաստը, որ մինչ չափորոշիչի ստեղծման աշխատանքներին անցնելը անհրաժեշտ էր հստակեցնել բարեփոխումների հիմքում ընկած հիմնարար գաղափարները, հայեցակարգային մոտեցումները: Այսպես, օրինակ, գրականության նոր չափորոշիչն ու ծրագիրը մշակող առարկայական խումբն այդպես էլ հիմնավորված պատասխաններ չտվեց այն հարցերին, թե ինչու հիմնական դպրոցում առարկան պետք է կոչվի «Գրականություն», իսկ ավագ դպրոցում՝ «Հայ գրականություն», կամ ի՞նչ սկզբունքներով են առաջնորդվում՝ ծրագրում այս կամ այն հեղինակներին ընդգրկելիս: Այստեղ հնարավոր են մի քանի մոտեցումներ:

1. Եթե առաջնային պլան է մղվում երեխայի աշխարհաճանաչողության կառույցի ձևավորման մասնավորից դեպի ընդհանուրը, ազգայինից դեպի համամարդկայինը մոտեցումը, ապա բնական է, որ սովորողները սկզբում պետք է հիմնականում ուսումնասիրեին հայ, ապա արտասահմանյան գրականությունը:
2. Ակադեմիական մոտեցման դեպքում առարկայի ծրագիրը կարելի է կառուցել պատմական, ժամանակագրական հենքի վրա՝ սկսելով վաղ անցյալից, հասնելով մեր օրերը:
3. Առարկայի ծրագիրը կարելի է կառուցել նաև ժանրային կամ թեմատիկ մոտեցմամբ:
4. Հնարավոր են այս մոտեցումների տարբեր զուգորդումներ:

Թե հանրակրթական դպրոցի որ աստիճանում ինչ սկզբունքն էր որդեգրվել, այդպես էլ հստակ չներկայացվեց, ինչը թեման շահարկողներից բացի, առաջացնում էր նաև խնդրով իրոք հետաքրքրվող մասնագետների դժգոհությունը: Բանավեճը պետք է ծավալվեր որդեգրված սկզբունքների դաշտում, այլ ոչ մեկ այլ տեղ, և դրա պատճառը հստակ ձևակերպված սկզբունքների բացակայությունն էր:

Նույն իրավիճակն էր «Հայոց պատմություն» և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաների պարագայում:

**Նոր չափորոշի կառուցվածքը:**

Չնայած վերը նշված հանգամանքներին՝ հանրակրթության նոր չափորոշիչն իր սկզբունքային մոտեցումներով, կառուցվածքով և բովանդակությամբ շահեկանորեն տարբերվում է նախկինից: Ամբողջ փաստաթղթի հիմքում ընկած է կարողունակությունների (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթության բովանդակության կառուցման մոտեցումը, ինչը համահունչ է աշխարհի շատ երկրների կրթական համակարգերի զարգացման ժամանակակից միտումներին: Չափորոշչով որպես գերագույն նպատակ սահմանվել է 8 առանցքային կարողունակությունների ձևավորումը: Այնուհետև ձևակերպվել են դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Որպեսզի այդ վերջնարդյունքները հասանելի լինեն, ձևակերպվել են կրթության բովանդակային դաշտը տրոհող յոթ ուսումնական բնագավառները, այդ բնագավառները ներկայացնող առարկայացանկերի ձևավորման սկզբունքները, որոնց հիման վրա ներկայացվել է հենքային ուսումնական պլանը: Նոր չափորոշիչը ներառում է նաև սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները:

Համառոտ անդրադարձ կատարենք չափորոշի թվարկված բաղադրիչներից յուրաքանչյուրին:

**Կարողունակությունները որպես նոր չափորոշի հենասյուներ:**

Նոր չափորոշի գլխավոր նորությունն այն է, որ այն կրթության բովանդակության կառուցման առարկայական մոդելից անցում է ապահովում կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելի:

Իսկ ի՞նչ է կարողունակությունը: Մանկավարժական գրականության մեջ կարելի է հանդիպել կարողունակությունների տարբեր սահմանումների: Ահա դրանցից մեկը: Կարողունակությունը անհատի ինտեգրալային, համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն

արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ: Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է, և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառայած խնդիրները:

Ընդունված է համարել, որ կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը ծնունդ է առել ԱՄՆ-ում անցյալ դարի 50-60-ական թվականներին, երբ անհրաժեշտություն էր առաջացել որոշելու ծառայողների աշխատանքի արդյունավետության չափանիշները: Փորձը ցույց էր տալիս, որ հաճախ ինտելեկտի բարձր աստիճանը չէր իրացվում աշխատակիցների մասնագիտական գործունեության ժամանակ և աշխատանքի արդյունավետության գնահատման նոր չափանիշների մշակման պահանջ էր առաջացել (ըստ՝ Исаев 2019:1-2): Առաջին անգամ կարողունակություններ ձևակերպվեցին իրենց գործունեության ոլորտում հաջողությունների հասած տարբեր մասնագետների, գործարարների, քաղաքագետների անձնային որակներն ու վարքն ուսումնասիրելու արդյունքում: Անցած դարի 60-ական թվականներից արդեն պարզ դարձավ, որ միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում:

1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպատակաուղղված կրթական ծրագրեր սկսեցին կառուցել արագ զարգացող նորարարական տնտեսություններ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ֆինլանդիան, Ավստրալիան, ԱՄՆ-ի առանձին նահանգներ, Կանադան, Հարավային Կորեան, Շոտլանդիան, Իռլանդիան, Սինգապուրը: Ավելի ուշ այդ շարժմանը միացան Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան, Հոլանդիան, Լատինական Ամերիկայի և հետխորհրդային երկրները: Հետևելով զարգացման ընդհանուր միտումներին՝ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր մշակութային, պատմական, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական առանձնահատկություններից, այդ ուղղությամբ շարժվում է իր նախընտրած ճանապարհով (Универсальные компетентности и новая грамотность: 29-30):

Այս առումով, պետական նոր չափորոշիչը հանրակրթությունը զարգացման ժամանակակից միտումներին ուղղորդելու փոքր-ինչ ուշացած, սակայն խիստ անհրաժեշտ փորձ կարելի է համարել:

Ներկայումս տարատեսակ կարողունակություններ ձևակերպվել են միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից: Առավել հայտնի են Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական մշակույթի 20

կարողունակությունները, որոնց ձևավորման, ստուգման և դասակարգման համար մշակվել են երկու հազարից ավելի բնութագրիչներ (Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 2., 2018), 2006 թ. ընդունված Եվրախորհրդարանի առաջարկած շարունակական կրթության 8 առանցքային կարողունակությունները (Key competences for lifelong learning (2006/962/EC)):

Վերջինս հիման վրա մեր չափորոշում ձևակերպվել են հետևյալ 8 առանցքային կարողունակությունները.

- լեզվական կարողունակություն և գրագիտություն,
- սովորել սովորելու կարողունակություն,
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- թվային և մեդիա կարողունակություն,
- մշակութային կարողունակություն,
- մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
- տնտեսական կարողունակություն:

Տարբեր երկրների կրթակարգերում կարելի է հանդիպել առանցքային կարողունակությունների տարբեր մոդելների: Օրինակ, որպես կարողունակություններ հաճախ ընդունվում են նաև այնպիսի որակներ, ինչպիսիք են ինքնակազմակերպումը, նախաձեռնողականությունը, պատասխանատվությունը, առաջնորդությունը և այլն:

Այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն աստիճանաբար զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին (Универсальные компетентности и новая грамотность:20): Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում առարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ վերառարկայական, համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր:

### **Չափորոշային վերջնարդյունքները:**

Նոր չափորոշի առանցքային գաղափարներից է տարրական, հիմնական և միջնակարգ կրթական ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների սահմանումը: Վերջնարդյունքներն, ըստ էության, չափորոշում սահմանված 8



առանցքային կարողունակությունների բնութագրիչներն են, որոնք տեղայնացված են դպրոցի տարբեր աստիճանների համար: Կարողունակությունների և վերջնարդյունքների ֆունցիոնալ կապերն առավել հստակ ցուցադրելու համար ցանկալի կլիներ, որ փաստաթղթում հստակ տարանջատվեր, թե որ կարողունակությանը վերջնարդյունքների որ խումբն է համապատասխանում:

Չափորոշչում վերջնարդյունքները հիմնականում ձևակերպված են հստակ, ըստ դպրոցի աստիճանների՝ պահպանված է դրանց հաջորդական զարգացումը, չափելի և հասանելի են՝ ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպման դեպքում: Որպես ասածի հաստատում բերենք հետևյալ օրինակը:

Տարրական դպրոցի համար ձևակերպված «...կարդա, հասկանա և վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր» վերջնարդյունքը հիմնական դպրոցում դարձել է «...վերլուծի և ընկալի գրական հայերեն տեքստեր և առանձնացնի դրանց հիմնական գաղափարը», իսկ միջնակարգ դպրոցում՝ «...գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնի դրանք իրավիճակներին»:

Դրա հետ մեկտեղ չափորոշչում առկա են նաև որոշ շեղումներ նշված չափանիշներից: Օրինակ, չափելիության տեսանկյունից խոցելի է «տեղեկացված լինի...» ձևակերպումը, կամ տարրական դպրոցի «Նկարագրի շրջակա աշխարհի օբյեկտները, երևույթները և դրանց փոխադարձ կապերը», «...ճանաչի էկոհամակարգերը և դրանց փոխադարձ կապերը» ձևակերպումները խիստ ընդհանրական են, միարժեք չեն ընկալվում, հետևաբար հետագայում որոշակի դժվարություններ են առաջացնելու համապատասխան ուսումնական նյութը ընտրելիս և ուսումնառության արդյունքները գնահատելիս:

Բերված վերջնարդյունքների ճնշող մեծամասնությունը վերառարկայական բնույթ են կրում և դրանց հասանելիության գործում իրենց դերն ունեն ուսումնական բոլոր առարկաները: Համաձայն նոր չափորոշչի տրամաբանության՝ սրանք պիտի ուղենիշ հանդիսանան առանձին առարկաների նպատակն ու բովանդակությունը սահմանելիս: Առարկայական դաշտում այս վերջնարդյունքների պրոյեկտման արդյունքում ձևակերպվելու են ուսումնական առարկաների վերջնարդյունքները, իսկ վերջիններիս հիման վրա մշակվելու է յուրաքանչյուր դասի նպատակն ու վերջնարդյունքները: Նոր չափորոշչի ներդրման հաջողությունը մեծ չափով պայմանավորված է այն

հանգամանքով, թե որքան ճիշտ և լիարժեք կկառուցվի վերը նշված տրամաբանական շղթան:

**Ուսումնական բնագավառները և առարկայացանկի ձևավորման սկզբունքները:**

Ուսումնական բնագավառը կրթության բովանդակության որոշակի տիրույթ է, որն առանձնանում է ուսումնառության օբյեկտով, գործունեության և ճանաչողության յուրահատուկ մեթոդներով: Հաճախ այն սահմանում են որպես առարկաների որոշակի խումբ: Իրականում ուսումնական բնագավառը ոչ թե առարկայախումբն է, այլ բովանդակային որոշակի տիրույթը, որը կարող է ներկայացվել այս կամ այն առարկայախմբով:

Նոր չափորոշով կրթության բովանդակային դաշտը, ի տարբերություն նախկին չափորոշի, իննի փոխարեն տրոհվել է յոթ ուսումնական բնագավառների:

Առաջարկվել են հետևյալ բնագավառները.

- Հայոց լեզու և գրականություն
- Հայրենագիտություն
- Օտար լեզուներ
- Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ)
- Հասարակություն, հասարակական գիտություններ
- Արվեստ և արհեստ
- Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

Դրանց թվում ներառվել են նոր՝ «Հայագիտություն» և «ԲՀՃՄ (STEM)» բնագավառները՝ դրանով իսկ շեշտադրելով այդ բնագավառների կարևորությունն ու զարգացման անհրաժեշտությունը:

Չափորոշով սահմանված յուրաքանչյուր ուսումնական բնագավառ ներկայացվում է իր ուղղվածությանը համապատասխան մեկ կամ մի քանի ուսումնական առարկաներով և (կամ) դասընթացներով: Հնարավոր է նաև հակառակը, որ մեկ առարկան ներկայացնի մի քանի ուսումնական բնագավառներ: Օրինակ՝ տարրական դպրոցի համար նախատեսված «Ես և շրջակա աշխարհը» առարկան միաժամանակ ներկայացնում է «Հայրենագիտություն», «Հասարակություն, հասարակական գիտություններ» և «ԲՏՃՄ» ուսումնական բնագավառները:

Համաձայն նոր չափորոշի՝ ուսումնական առարկաները բաժանվում են երկու խմբի. ա) առարկաներ, որոնք պարտադիր են հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող ցանկացած դպրոցի համար, բ) առարկաներ, որոնք ընտրում է սովորողը: Պարտադիր

ուսումնասիրության առարկաների ցանկը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Չափորոշչով նախատեսված այս մոտեցումը լիարժեք իրականանալի է ավագ դպրոցում, ինչը թույլ է տալիս էապես կրճատել ծանրաբեռնվածությունը՝ միաժամանակ նպաստավոր պայմաններ ստեղծելով սովորողների կրթական պահանջների լիարժեք բավարարելու համար: Ավագ դպրոցում այսուհետ պարտադիր 15 առարկայի փոխարեն սովորողները կարող են ուսումնասիրել ընդամենը 9 առարկա: Նշենք նաև, որ այդ թիվը կարող է աճել միայն սովորողի ցանկությամբ:

Նույնը չի կարելի ասել հիմնական դպրոցի համար: Կրթության բովանդակության չափից ավելի «կտրտվածությունը» բերել է նրան, որ միջին դպրոցում ուսումնասիրվող առարկաների թիվը հասնում է 22-ի: Այստեղ կարևոր խնդիր է մնում կրթության բովանդակության ինտեգրման առավել արդյունավետ մոդելների մշակումն ու ներդրումը:

### **Ուսումնական պլանը:**

Ուսումնական պլանը ուրվագծում է կրթության բովանդակության ընդհանրական պատկերը: Ուսումնասիրելով ցանկացած երկրի հանրակրթության ուսումնական պլանը՝ կարելի է հստակ պատկերացում կազմել այդ ոլորտում երկրի վարած քաղաքականության, որդեգրած սկզբունքների, մոտեցումների, առաջնահերթությունների մասին:

Հանրակրթության պետական նոր չափորոշչում ներկայացված ուսումնական պլանը սահմանում է տարրական, միջին և ավագ դպրոցներին հատկացվող ժամաքանակների տոկոսային բաշխումը: Ահա այստեղ է, որ կրթության ոլորտում պետական քաղաքականությունը մշակողները հստակ պետք է պատկերացնեն և առաջնորդվեն երկրի զարգացման առաջնահերթություններով: Նման մոտեցման բացակայությունն է, որ հանգեցնում է անպատասխան մնացող հարցադրումների՝ ուսումնական ո՞ր բնագավառները պետք է առավել կարևորվեն, ո՞ր առարկաներին պետք է ավելի շատ ժամեր հատկացվի: Այստեղ է, որ կարծիքները տարանջատվում են: Յուրաքանչյուր կողմի փոստարկները բավականաչափ համոզիչ են թվում, ինչը դժվարացնում է խնդրի լուծումը:

Մեր երկրի բնական պաշարների խիստ սահմանափակությունը թելադրում է ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված քիչ հումքատար արտադրությունների կազմակերպում, բարձր տեխնոլոգիաների ներդրում, ինչը պահանջում է բավարար ժամաքանակների հատկացմամբ բնագիտամաթեմատիկական առարկաների պատշաճ ուսուցում:

Ներկայումս դժվար է պատկերացնել հասարակական կյանքի, տնտեսության, մարդկային գործունեության որևէ ոլորտ առանց տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների լիարժեք կիրառման. տեղեկույթի պայթյունածն աճը ստիպում է տեղեկատվական հոսքում արագ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկույթը որոնելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողունակություն ձևավորել՝ սկսած տարրական դպրոցից:

Երկիրն ունի նաև ժողովրդավարական պետություն կառուցելու հիմնարար նպատակ, հետևաբար անհրաժեշտ է հասարակագիտական առարկաների դերի բարձրացում:

Կարևորելով բնակչության առողջությունը, երկրի անվտանգությունն ապահովելու, առողջ քաղաքացի և մարտունակ բանակ ունենալու պահանջը՝ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել «Նախնական զինվորական պատրաստություն» և «Ֆիզկուլտուրա» առարկաների ուսուցմանը:

Աշխարհում ընթացող գլոբալացման գործընթացները ավելի են սերտացնում երկրների կապերն ու հարաբերությունները, փոխադարձ կախվածությունները: Աշխարհից մեկուսացված, ինքնաբավ կյանքով ապրելը դառնում է անհնար: Այս պայմաններում փոքրաթիվ ազգերի, այդ թվում՝ հայերի համար մշակութային ինքնության պահպանման խնդիր է առաջանում, ինչն իր արտահայտությունը պետք է գտնի կրթական քաղաքականության մեջ: Առաջարկվում է ավելի շատ ժամեր հատկացնել հայագիտական առարկաներին, դպրոցում ուսումնասիրության առարկա դարձնել արևմտահայերենը, գրաբարը:

Աշխարհում խորացող կայուն զարգացման, բնապահպանական խնդիրները պահանջում են պատշաճ ուշադրություն դարձնել բնապահպանական կրթությանը: Շեշտելով այս հանգամանքը՝ համապատասխան կազմակերպությունները պահանջում են ուսումնական պլանում ներառել «Բնապահպանություն» կամ «Էկոլոգիա» առարկան:

Պատմաբանների գերակշիռ մասը պնդում է, որ հայոց եկեղեցու պատմությունն առավել ամբողջական և արդյունավետ կարելի է ներկայացնել առանձին ուսումնական առարկայով:

Առաջնահերթությունների այս շքերթը կարելի է շարունակել: Հանրային և մասնագիտական քննարկումներում գերիշխում է «առարկայական էգոիզմ» կոչվածը, երբ յուրաքանչյուր կողմ պահանջում է իր ոլորտն անպայման ներկայացվի առանձին ուսումնական առարկաներով և դրանց հատկացվի հնարավորինս շատ ժամաքանակ: Արդյունքը հանգեցնում է ուսումնական պլանի «ճողվածքի»: Կրթության բովանդակությունը չափից ավելի մեծ թվով առարկաներով մասնա-

տումը, առաջնահերթությունների բացակայությունը, վարվող համահարթեցման քաղաքականությունը չի կարող նպաստել երկրի զարգացումը խթանող կրթական համակարգի ձևավորմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն երկրներին են հաջողության հասնում, որոնք կրթության ոլորտում սահմանում են հստակ առաջնահերթություններ և հետևողականորեն ձգտում են դրանց իրականացմանը:

Նշված իրավիճակից դուրս գալու ելքը առավել ճկուն և ազատության լայն հնարավորություններ տվող ուսումնական պլանի ստեղծումն է, որը թույլ կտա դպրոցի տնօրենությանը և մանկավարժական կոլեկտիվին ձևավորելու իրենց տեսլականին համահունչ, համայնքի կարիքներին համապատասխանող դպրոց: Անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել դպրոցներին ու սովորողներին բոլոր դպրոցների համար պարտադիր փոքր թվով պարտադիր առարկաների հետ մեկտեղ ընտրելու դպրոցի և սովորողների նախասիրություններին համապատասխան առարկաներ: Այսպիսի մոտեցումը լավ հող կնախապատրաստի տարատեսակ դպրոցների ձևավորման համար, կհարստացնի մեր կրթական համակարգի համայնապատկերը:

#### **Գնահատման համակարգը:**

Նոր չափորոշչի փիլիսոփայությունը պահանջում է գնահատման համակարգի էական փոփոխություններ: Հարկ է նշել, որ ներկայումս չափվում են միայն հորիզոնական գիտելիքները՝ ըստ առանձին առարկաների, մշակված չեն կարողունակությունների ձևավորմանն ուղղված սովորողների վերառարկայական որակները չափող և գնահատող գործիքներ:

Առանձնահատուկ տեղ է հատկացվել ձևավորող գնահատմանը, որի ներուժը մինչ օրս մեր կրթական համակարգում մնում է չիրացված: Համաձայն նոր չափորոշչի՝ մինչև հինգերորդ դասարանի երկրորդ կիսամյակը նախատեսվում է իրականացնել բացառապես ձևավորող գնահատում, որի նպատակն է ուսումնառության որոշակի ժամանակահատվածի համար բացահայտել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները և արդյունքների վերլուծության հիման վրա մշակել հետագա գործողությունների պլան յուրաքանչյուր սովորողի առաջադիմությունը բարելավելու նպատակով:

Ինչպես նախկինում, այստեղ ևս ընդունված է գնահատման տասը միավորային սանդղակը, սակայն, ի տարբերություն նախորդի, այլևս վերանում է բացասական գնահատական հասկացությունը: Բոլոր գնահատականները համարվում են դրական և գնահատման

յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Նշենք, որ այս դրույթի ներդրումը կպահանջի սովորողների շրջանում գնահատականի վերաիմաստավորման, ուսման նկատմամբ սովորողների հետաքրքրությունների, մոտիվացիայի ձևավորման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանք: Բացի այդ հարկ կլինի, որ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը չափորոշչային պահանջների կատարումը ստուգելու նպատակով դպրոցներում կազմակերպի արտաքին գնահատում՝ իր կողմից սահմանված պարբերականությամբ:

**Հետագա քայլերը:**

2021-2022 ուսումնական տարվանից սկսած՝ մշակված Հանրակրթության պետական նոր չափորոշիչը և առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը փորձարկում են անցնում Տավուշի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում: Նախատեսվում է փորձարկման արդյունքների հիման վրա լրամշակված ամբողջական փաթեթը համընդհանուր գործածության դնել 2023-2024 ուսումնական տարվանից:

Փորձարկման արդյունավետությունը կախված է բազմաթիվ պարամետրերից: Մենք կարող ենք ունենալ լավ մշակված չափորոշիչ և առարկայական ծրագրեր, սակայն վատ պատրաստված ուսուցիչներ, կամ ոչ համապատասխան ուսումնական նյութեր, դասագրքեր և դրա պատճառով նոր մտահղացումների, գաղափարների ներդրումը ձախողվի, ու մենք չկարողանանք որոշել, թե ինչն էր պատճառը. նոր մոտեցումներն էին վատ, թե՞ դա պայմանավորված էր այլ գործոններով: Որպեսզի փորձարկումը հավաստի տեղեկություններ հաղորդի նոր չափորոշչի գաղափարների կենսունակության մասին, անհրաժեշտ է ապահովել նշված բոլոր պայմանները:

Որքան էլ որ հաջողված լինի նոր չափորոշիչը, այն ի սկզբանե դատապարտված է ձախողման, եթե չի ներդրվել գնահատման արդյունավետ համակարգ, համապատասխան փոփոխություններ չեն կատարվել մանկավարժական կադրերի վերապատրաստման և պատրաստման, ուսումնական գրականության (մասնավորապես դասագրքերի) մշակման, ընտրության, տպագրության գործընթացներում, դպրոցները չեն ապահովվել պահանջվող ուսումնական ռեսուրսներով: Նոր չափորոշչի ներդրումը կպահանջի նաև դպրոցի կառավարման և ֆինանսավորման համակարգերի համապատասխան փոփոխություններ:

Գալիք մի քանի տարիներին անհրաժեշտ է խոշորացույցի տակ պահել նոր չափորոշչի ներդրման ողջ գործընթացը: Մոնիտորինգի արդյունքում պետք է պարզել առաջացած խնդիրները և մշակել արագ

արձագանքման մեխանիզմներ: Անհրաժեշտ են շարունակական բաց, թափանցիկ քննարկումներ շահագրգիռ բոլոր կողմերի հետ, այդ թվում՝ դպրոցների տնօրենների, ուսուցիչների, սովորողների, տեղական և պետական կառույցների, ակադեմիական շրջանակների: Հակառակ պարագայում այն արժանանալու է իր նախորդի ճակատագրին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Հանրակրթության պետական կրթակարգ, 27 մայիսի 2004 թվականի N 20, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829>:  
Hanrakrt'owt'yan petakan krt'akarg, 27 mayisi 2004 t'vakani N 20, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829>:
2. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, հաստատված է ՀՀ կառավարության 17 հունիսի 2004 թվականի N 900-Ն որոշմամբ, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195>:  
Mijnakan krt'owt'yan petakan chap'oroshich, hastatvac' e' HH kar'avarowt'yan 17 hownisi 2004 t'vakani N 900-N oroshmamb, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195>:
3. Հանրակրթության պետական չափորոշիչ, 09.02.2021թ. N136-Ն որոշմամբ: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>:  
Hanrakrt'owt'yan petakan chap'oroshich, 09.02.2021t'. N136-N oroshmamb: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>:
4. Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին (նախագիծ), <https://www.e-draft.am/projects/528/about>:  
Hayastani Hanrapetowt'yan o'renqy' Hayastani Hanrapetowt'yan krt'owt'yan minch& 2030 t'vakany' zargacman petakan c'ragiry' hastatelow masin (naxagic'), <https://www.e-draft.am/projects/528/about>:
5. Հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրություն, պատրաստվել է «Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» գրասենյակի պատվերով, Երևան, 2016:  
Hanrakrt'owt'yan petakan chap'oroshichi, ar'arkayakan chap'oroshichneri & c'ragreri veranayman kariqi gnahatman owsowmnasirowt'yown, patrastvel e' «I-Vi qonsalt'ing» P'BY'-i & «Ayb» krt'akan himnadrami koghmic, KGN «Krt'akan c'ragreri kentron» grasenyaki patverov, Er&an, 2016:

6. Մելիքյան Գ., Գալոյան Ա., Միասնացված ուսուցման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում, Մանկավարժություն, N 3, 2012:  
Meliqyan G., Galoyan S., Miasnacvac' owsowcman himnaxndiry' hanrakrt'akan dprocowm, Mankavarjhowt'yown, N 3, 2012:
7. Исаев Т. Е., Рубаник А. Н., Становление компетентностного подхода в ведущих зарубежных странах, conf\_teacher@rgups.ru  
Ysaev T. E., Rubanyk A. N., Stanovlenye kompetentnostnogo podhoda v vedushhyh zarubezhnyyh stranah, conf\_teacher@rgups.ru
8. Универсальные компетентности и новая грамотность: от лозунгов к реальности. М.: Изд. дом ВШЭ, 2020.  
Unyversal'nyye kompetentnosty y novaja gramotnost': ot lozungov k real'nosty. M.: Yzd. dom VShЭ, 2020.
9. Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 2. Council of Europe, April 2018. Printed at the Council of Europe.
10. Recommendation of the European Parliament and of the Council of 18 December 2006 on Key competences for lifelong learning (2006/962/EC), Official Journal of the European Union, L 394/10.

## **ГАГИК МЕЛИКЯН - НОВЫЙ ГОСУДАРСТВЕННЫЙ СТАНДАРТ ОБЩЕГО ОБРАЗОВАНИЯ (НОВЫЕ ПОДХОДЫ, ПЕРСПЕКТИВЫ)**

**Ключевые слова:** *государственный стандарт общего образования, ключевые компетенции, конечные результаты, базисный учебный план, система оценки*

Целью данной статьи является анализ идей, принципов и фундаментальных подходов, составляющих основу формирования нового государственного общеобразовательного стандарта, а также необходимость стимулирования конструктивных обсуждений в сфере педагогического сообщества до полного и окончательного внедрения стандарта.

В статье рассматриваются особенности содержания образования, основанные на компетенциях и способствующих их формированию конечных результатах, новшества предлагаемого базисного учебного плана и системы оценивания.

В результате сравнительного анализа представлены преимущества нового стандарта и определенные риски, связанные с полноценным восприятием идей, отраженных в нем, и его внедрением.



**GAGIK MELIKYAN - NEW STATE STANDARD OF GENERAL EDUCATION  
(NEW APPROACHES, PERSPECTIVES)**

**Keywords:** *state standard of general education, key competencies, outcomes, basic curriculum, assesment siste*

The purpose of this article is to analyze ideas, principles and fundamental approaches, constituting the basis for the formation of a new state general educational standard, as well as the to stimulate constructive discussions in the field of the teaching community before the full and final implementation of the standard.

The article examines the features of the content of education based on competencies and the final results that contribute to their formation, the innovations of the proposed basic curriculum and the assessment system.

As a result of the comparative analysis, the advantages of the new standard and certain risks associated with the full perception of the ideas reflected in it and its implementation are presented.

**Ներկայացվել է՝ 06.09.2021  
Գրախոսվել է՝ 09.09.2021**